

ՆՈՐ-ԴԱՐ

№ 214 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 4 Դեկտեմբերի 1899 Շաբաթ, 4 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 214

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція ,,Норъ-Даръ",
կամ Tiflis. Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկերութիւնների համար կրկնապատիկ։

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ լրագիրը 1900-ին կըհրատարակուի Թիֆլիսում նոյն ձևով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է, 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ.։

Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով առաջին երեսումը՝ բառը 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է, Վորոնցովսկայա փողոցում. № 20։

Փոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ въ Редакцію «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase), Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Առողջապահութեան գործը մեր քաղաքներում։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են —Նոր Նախիջևանից։ Բագուից։
Գրականութիւն և գեղարուեստ։
Հայոց թատրոն Բագւում։
Թղթակցութիւններ. — Գանձակից։
Քաղաքական.—Մասնաւոր նամակներ Տրանսվաալից։ Ելեքտրական լոյսի ազդանշաններ։ Թիւրքիա և Անգլիա։
Հեռագրներ։
Բանասիրական.—Գրական ակնարկներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 3 դեկտեմբերի 1899 թ.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Ամեն տեղի քաղաքային խորհրդի գլխաւոր գործը քաղաքի բարեկեցութիւնն է։

Ամենախեղճ և հասարակ քաղաքի խորհրդի ամենից գլխաւոր գործը պէտք է լինի հոգալ քաղաքի բնակիչների բարեկեցութեան մասին։

Ամենից առաջ անհրաժեշտ է ուրեմն, որ քաղաքի բնակիչների ներշնչած օդը մաքուր լինի, ջուրը առողջարար, բնակարանը լոյս լինի և չոր։

Այդ կողմից կատարելութեան հասնելը շատ դժուար է, բայց իւրաքանչիւր քաղաքի խորհուրդը կարողացածին չափ այդ մասին պարտաւոր է հոգալ։

Մաքուր օդ, առողջարար ջուր, լոյս և չոր բնակարան, աւելացնենք և սնունդի համար թարմ մթերք։

Երբ մի քաղաքի բնակիչները զրկուած են մաքուր օդից և ջրից, բնակարանները մութն են և խոնաւ, կենսական մթերքը փչացած, փտած, այդ քաղաքն ինչքան էլ որ հարուստ լինի և սիրուն կողմից փայլուն, չի կարելի բարեկարգ քաղաքների շարքում դասել։

Կովկասի ամենից աչքի ընկնող քաղաքը, նաւթի շնորհիւ, խմելու մաքուր ջուր չունի և ոչ էլ ջրմուղ։

Կովկասի առաջին քաղաքը՝ Թիֆլիսը իւր ջրմուղով ողորմելի վիճակի մէջն է։

Զարմանք չէ, որ այդ երկու քաղաքների համար մաքուր և բաւականաչափ ջուր մատակարարելու խնդրումն են զբաղւում, զարմանալին այն է, որ մինչև այսօր որոշ և ցանկալի նպատակին չեն հասել։

Մենք կարծում ենք, թէ ինչ խնդիր որ քաղաքի բնակիչների բարօրութեան է վերաբերւում, պէտք է շուտափոյթ վճռուի, և փողի խնդիրը, այսպէս՝ խնայողութեան քաղաքականութիւնը չպէտք է խափանէ գործը։

Փորձը ցոյց է տալիս, որ այդպիսի խնդիրներում, ընդհանուրի օգտին վերաբերեալ գործում մէկին առաջ ծախսելը՝ էլի օգուտ քաղաքինն է. աւելի լաւ է թանկ նստի գործը և մշտական լինի, քան թէ աժան լինի և անպէտք։ Այդ աժանութիւնն աւելի թանկ է նստում վերջը։ Թիֆլիսն իրեն համար, այսպէս ասած, տնային միջոցներով շինեց աճապարական ջրմուղը, որ այժմս համարեա թէ անպէտք է։ Եթէ էն գլխից մէկին առաջ ծախսելու լինէր, և եւրոպական ինժեների ձեռքով ջրմուղին շինուէր, այսօր Թիֆլիսը կունենար մաքուր և բաւականաչափ ջուր, ստիպուած չէր լինել նոր ջրմուղի շինելու և այդ շինութեան վրայ նոր գումարներ ու ահագին գումարներ ծախսելու մասին մտածելու։

Որտեղ հարկաւոր է մեծ գումար ծախսել, պէտք է ծախսել. դա շռայլութիւն չէ, այլ խնայողութիւն։

Ինչ էլ որ լինի, ինչքան էլ որ մեր քաղաքների խորհուրդները խօսելու, ճառելու վիճելու լինեն, մինչև որ իրենց խնամքին յանձնուած քաղաքների բնակիչները կըմնան մաքուր օդից զրկուած, առանց մաքուր ջրի, առանց թարմ մթերքի և չոր ու լոյս բնակարանների, նրանք ոչ մի գործ չեն լինի կատարած և ամենևին արժանի էլ չեն քաղաքի հայր պատուաւոր անունով կոչուելու։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. իշխ. Գ. Ս. Գոլիցինը հրատարակել է հետևեալ հրամանը.

«Գլխաւոր շտաբի կառավարիչը տեղեկագրեց, որ Թագաւոր Կայսրը, կարդալով Բաքուի 153-րդ հետևակ գնդի հրամանատարի ներկայացրած մանրամասն զեկուցումն այն բանի մասին, թէ ինչպէս սոյն տարուայ յունիսի 29-ին թուրք զինեալ քրդեր անցել էին մեր սահմանը Կարասու գետի մօտ, Երևանի նահանգի Սուրմալուի գաւառում, և յարձակւում էին գործել յիշեալ գնդի որսորդական զօրախմբի վրայ,—զեկուցման այն տեղում, ուր ասւում է, թէ այդ զօրախմբի մէջ գտնուած մի քիւրդ տեսնելով զօրախմբի գլխաւոր պորուչիկ Սիւէրտի վայր ընկնելը, որը խեղումներ ստացած լինելու պատճառով չէր կարողացել հետևել զօրախմբին, առել էր նրան իւր ուսերի վրայ և, իւր կեանքը պարզապէս վտանգի ենթարկելով, դուրս էր բերել կռուի վայրից,—Բարձրագոյնս հաճել է սեպհական ձեռքով ընդգծել «մի քիւրդ» բառերը, իսկ լուսանցքում գրել «молодецъ».

«Այնուհետև պարգևներ տալու համար Երևանի նահանգապետի ներկայացրած տեղացիների ցանկից պարզուեց, որ յիշեալ քիւրդը Սուրմալուի գաւառի Կարագիւնէյ ձմեռանոցի բնակիչ է, Արաբ Սադը-օղլի, որը նշանաւոր քաջութիւն է գործել նաև Բաշքեասըլարի պահեստ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

V.

Մատենախօսութիւն.---Նոր լոյս տեսած գրքեր։ ---Ջէօրջ Գ.-ի կենսագրութիւնը։---Խ. Աբովեանի և Գ. Զարդարի քննադատը։---Յ. Յակոբեանի բանաստեղծութիւնները։ --- Ոտանաւորչների մասին։

Ա.

Մատենախօսութիւն ասելով ես հասկանում եմ կարճառօտ տեսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին, համեմատած քննադատական նկատողութիւններով։ Մատենախօսութիւնները կրկնակի օգուտ են բերում՝ մէկ—ընթերցողին, ծանօթացնելով նրան նոր հրատարակութիւնների հետ և երկրորդ—հեղինակին, եթէ նրա գրուածքն ինչ-ինչ պատճառներով չի ենթարկւում աւելի լուրջ և մանրամասն քննադատութեան։ Իսկ անկեղծ ասած՝ մեր հրատարակութիւնների մեծամասնութիւնը տակաւ լոյս է տեսնում և մոռացւում առանց արժանանալու անգամ ամենատարրական գրախօսութեան կամ մատենախօսութեան։

Ազատ ժամերիս նոր լոյս տեսած գրքեր կարդալով կամ աչքի անցկացնելով՝ ես սովորութիւն ունիմ ինքս ինձ հաշիւ տալու կարդացածիս մասին. շատ սակաւ այդ իմ անձնական տպաւորութիւններս գրի եմ առնում։ Դուցէ, ասում եմ, անօգուտ չի լինիլ ընթերցողների համար, եթէ տամ նրանց նոր լոյս տեսած գրքերի բովանդակութիւնը, այդ գրքերից ստացած տպաւորութիւնս և կարդացածիս առթիւ անկեղծ դիտողութիւններս։

Ես մի անգամ արդէն նկատել էի, որ մեր գրականութեանը գրեթէ բոլորովին պակասում է գեղարուեստական քննադատութիւնը. աչքի ընկնելու չափ պակասում են նաև կենսագրութիւններ և մենագրութիւններ։ Մենագրութիւն կոչւում է մի որ և է հարցի, գրուածքի, հեղինակի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրութիւնը։ Մինչև այժմս լոյս տեսած՝ մեր ազգային գործիչների կենսագրութիւնների մէջ նշանաւորներն են՝ Երուանդ Շահազիզի «Միքայէլ Նալբանդեանն»ը, վեր. Արիստակէս սրբազանի «Աբովեանի կեանքը», Ա. Զօպանեանի «Դուրեան»-ը, Ներսէս Տէր Կարապետեանի (այժմ քահանայ) «Խաչատուր Աբովեան»-ը։ Նորերս լոյս տեսաւ «Նոր-Դար»-ի աշխատակից, երիտասարդ գիտնական-քննադատ Մանուկ Աբեղեանի կազմած Ջէօրջ Դ. կաթողիկոսի համառօտ կենսագրութիւնը։ Կենսագրութիւնը կազմուած է երջանկայիշատակ կաթողիկոսի հիմնած և սիրած ճեմարանի քսանհինգամեակի առթիւ. այդ գրքի լոյս տեսնելը ես համարում եմ վերին աստիճանի ժամանակակից և նպատակայարմար։ Համառօտ կոչուած, բայց բաւականին ընդարձակ ծրագրով գրուած այս կենսագրութիւնը կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ։ Գրուածքի լեզուին պակասում են, իմ կարծիքով, աշխոյժ և ույժ, բայց նիւթն այնպէս լաւ է դասաւորուած, այնպիսի ապացոյցով ընտրուած և պատմուած, որ առաջին իսկ գլխից շտապում ես շարունակել և շարունակել։ Գիրքը կարդալուց յետոյ ցաւում եմ, որ աւելի ընդարձակ չէ։ Կաթողիկոսը պատկերանում է այստեղ ընթերցողի առաջ իբրև մի վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն, ուժեղ կամքի տէր, լաւ հայ, և լուսաւոր գաղափարների հետամուտ եղող մի գործիչ։ Առանձնապէս աչքի է ընկնում այդ մարդու մէջ նրա մի խոշոր յատկութիւնը՝ ամեն ինչ անել ծրագրով, որոշ սիստեմով։ Այդ յատկութիւնն է, որ նա ինչ որ էլ սկսում է—սկսում է լաւ կշռելուց յետոյ և գրեթէ միշտ գլուխ է բերում։ Առանձնապէս արժանի են ուշադրութեան Թ. և ԺԱ. գլուխները, թէպէտ և ամեն մի գլուխ որոշ չափով գաղափար է տալիս մեզ կաթողիկոսի այս կամ գործի մասին, նրա բնաւորութեան այս կամ գծերի մասին։ Ցանկալի կըլինէր, որ երկրորդ հրատարակութեան ժամանակ յարգելի հեղինակը մի երկու գլուխ էլ նուիրէր՝ Ջէօրջ Դ. կաթողիկոսի ժամանակի և շրջանի նկարագրութեան, նրա մասնաւոր առտնին, ընտանեկան կեանքին և այն յարձակումներին, որոնց ենթակայ էր հանգուցեալը։ Գրքի սկզբին դետեղուած է Ջէօրջ Դ-ի յաջող պատկերը։ Գրքից ստացուած զուտ արդիւնքը յատկացուած է ճեմարանի օգտին։ Գիրքը տպուած է Մայր Աթոռի տպարանում շատ մաքուր, թէպէտ և տառերը գեղեցիկ տառերից չեն։ Նկատելի է, որ ս. Էջմիածնի ճեմարանը տարէ ցտարի յառաջադիմութիւն է անում և կատարելագործւում։

Բ.

Յոբելեանները, տարեդարձները, դամբանական հանդէսներ, բայց ընդհանուր - հասարակական կենդանութիւնից, միշտ առաջնում են մտքերի փոխարինութիւն և կենդանութիւն գրականութեան մէջ։ Այսպէս՝ անցեալ տարի լրացաւ Խ. Աբովեանի մահուան յիսնամեակը, և այդ առթիւ երևցան մեր գրականութեան համար անսպասելի ճոխութեամբ՝ յօդուածներ, կենսագրութիւններ, ուսումնասիրութիւններ և այլն, նուիրուած մեր գրականութեան հօր կեանքին և գործունէութեան։ Այս օրերս «Նոր-Դար»-ից արտատպուած լոյս տեսաւ Յ. Ճահնազարեանի աշխատասիրութիւնը «Խաչատուր Աբովեանի հասարակական և գրական գործունէութիւնը» վերնագրով։ Հեղինակը քաններեք մեծադիր երեսների վրայ ջանում է գրեթէ բացառապէս Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի»-ն և ցոյց է տալիս այն եզրակացութեան, որ այժմ այդ վէպն ունի միմիայն պատմական նշանակութիւն և որ ժողովրդին աւելի մատչելի է և օգտակար կարդալ Րաֆֆու, Գամառ-Քաթիպայի և այլոց գրուածքները, քան Խ. Աբովեանի երկերը։ Տարիներ առաջ այդ միտքը յայտնել էր նոյն այս թերթում վաղամեռիկ Յովհաննէս Խուչումեանը, որ միևնոյն ժամանակ առաջարկել էր «Վէրք Հայաստանի»-ն ամենքին մատչելի անելու համար վերածել մաքուր գրական լեզուի և այնպէս տալ ընթերցող հասարակութեանը։ Բաւականին սրամիտ, բայց ապօրինակ առաջարկութիւն։ Յ. Ճահնազարեանի յօդուածի վերնագիրը պէտք է լինէր «Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի»-ն», թէ չէ՝ այժմ անհասկանալի է, ինչու հեղինակը մեզ չի ծանօթացրել և Խ. Աբովեանի մանկութեան ու Դերպատի կեանքի հետ, ոչ էլ տուել է նշանաւոր գործչի ժամանակի ընդհանուր նկարագիրը։

Աւելի յաջող գործ է Յ. Ճահնազարեանի միւս քննադատութիւնը, որի առաջին մասը նախ տպուած էր «Նոր-Փորձ»-ի մէջ։ Խօսքս «Անմեղ Զոհեր» վիպակը Գ. Զարդարի վէպի (նիւթում) յօդուածի մասին է։

Նախ չեմ կարող մի երկու խօսքով չյայտնել իմ ցաւակցութիւնս Յ. Ճահնազարեանցի խմբագրութեամբ և բժ. Ճահնազարեանի հրատարակութեամբ լոյս տեսած «Նոր-Փորձ» հանդէսի դադարման առթիւ։ Այդ վեցամսեայ հանդէսը—նրա առաջին գրքին նայելով—մտադիր էր նոր, քննադատական հոսանք մտցնել մեր գրականութեան մէջ։ ճիշտ է, «Նոր-Փորձ»-ի առաջին գիրքը թոյլ էր կազմուած, բայց նրա մէջ մի ինչ-որ կայծ, կենդանութիւն, նոր խօսք արտայայտելու ցանկութիւն էր երևում։ Կարելի էր գուշակել, որ երկրորդ գիրքը և հետևեալները աւելի լաւ խմբագրուած կըլինէին. և յանկարծ իմանում ենք, որ այդ նորածին ձեռնարկութիւնն էլ դեռ չծաղկած թառամել է։

Դառնալ Յ. Ճահնազարեանի «Անմեղ Զոհեր» ուսումնասիրութեան, մենք առանց տատանուելու խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարդալ այդ գիրքը։ Ցաւում ենք, որ յօդուածագիրը իւր ուսումնասիրութեան առարկայ է չինել Գ. Զարդարի միմիայն կանանց տիպերը, առանձնապէս վիպասանն այնքան քիչ է գրել, որ կարելի էր խօսել նրա գրուածքների մատի հետևակ բատալիոնի ռազմիկների և թրքական քրդերի միջև սոյն տարուայ մայիսի 11-ին Քարագ-Թափայի բարձունքների մօտ պատահած ընդհարման ժամանակ։

«Ի հետևանս այս բանի, Բարձրագոյնս ինձ տրուած իշխանութեամբ Սաղոօղլուն նշանակում եմ արծաթէ մեդալ «քաջութեան համար» մակագրով, կրելու համար կրծքին Գէորգեան ժապաւէնի վրայ և քսանուհինգ րուբլի»։

— Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. իշխան Գ. Ս. Գոլիցինը հաճել է Մոսկուայի համալսարանի չքաւոր ուսանողների օգտին նուիրել 100 ր.։

— Դեկտեմբերի 1-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ խորհրդակցութիւն կար քաղաքային ջրանցքն ընդարձակելու խնդրի մասին։ Խորհրդակցութեանը մասնակցում էր յատուկ այդ բանի համար հրաւիրուած ինժեներ Լինդլէյը։ Վերջինս վճռականօրէն յայտնեց, թէ պէտք է ջուր բերել նոր աղբիւրներից։ Ինչ վերաբերում է Նատախտարի աղբիւրներին, պ. Լինդլէյն այն կարծիքը յայտնեց, թէ նախապէս պէտք է հետազօտել այդ աղբիւրները, որը, նրա հաշւով կընստի, 60,000-ից մինչև 100,000 ր.։

— Կովկասիշերամապահական կայարանը յայտարարում է, որ ներկայումս բոլոր բարեխիղճ ֆիրմաները ներկայացրել են իրենց շերամի սերմը յիշեալ կայարանում հետազօտելու համար։ Կայարանը, հետազօտելուց յետոյ, սերմը նոյն ֆիրմաներին վերադարձնում է երեք գոյնի բանդերոլով. 1) ցելլիւլեար սերմն ունի սպիտակ բանդերոլ կարմիր կնքով, 2) արդիւնաբերական սերմը—կապոյտ բանդերոլ կարմիր կնքով և 3) վարակուած սերմը—կարմիր բանդերոլ սև կնքով։ Բացի դրանից վարակուած սերմը պարունակող արկղների վրայ չտեմպել է խփուած տեղական լեզուներով «վարակուած» մակագրութեամբ։ Բոլոր արկղների վրայ նոյնպէս կայ «1900 թիւ» չտեմպելը։ Շերամապահներն առանձնապէս պէտք է ուշադրութիւն դարձնեն այն բանի վրայ, որ կայարանի բանդերոլները չունեցող սերմ չառնեն իրենց, որովհետև առանց բանդերոլի սերմ նրանց կարող են տալ միայն այն անձերը, որոնք վստահ չեն իրենց սերմի լաւ յատկութեան վրայ։ Նմանապէս շերամապահները պէտք է ընդունեն միայն այն սերմերը, որոնք սպիտակ և կապոյտ բանդերոլներ ունեն, և չպէտք է ընդունեն կարմիր բանդերոլ ունեցող սերմերը։

— Նահանգական և գաւառական քաղաքների ոստիկանական հաստատութիւնների վրայ պարտք է դրուած իւրաքանչիւր օտարահպատակի մահուան մասին անյապաղ հաղորդել այն պետութեան հիւպատոսին, որին պատկանում է մեռնողը։ Այս միջոցը ձեռք է առնուած այն բազմաթիւ դժուարութիւնների պատճառով, որոնք ծագում են ռուսաց կայսրութեան մէջ մեռնող օտարերկրացիների թողած կայքերի ժառանգական գործը կարգադրելիս։

— Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում անցեալ տարի նաւթարդիւնաբերելու նպատակով մի ընկերութիւն կազմակերպուեց. գործին մասնակցողներն ինչ ինչ հանգամանքների շնորհիւ եռանդով ձեռնարկուած գործին չկարողացան վերջնական կազմակերպութիւն տալ։ Այժմ այդ ընկերութիւնն արդէն կազմակերպուել է Թիֆլիսում և Բագուի մօտ Բիբի Էյբաթ կոչուած տեղում մի-երկու լաւ կտոր հող ձեռք բերելով ձեռնարկել է գործին Թիֆլիսի նաւթարդիւնաբերող ընկերութեան առաջին ժողովը տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում, նոյեմբ. 28 ին, Ս. Սպանդարեանի նախագահութեամբ։ Այդ ժողովում ընկերութիւնն ընտրեց հինգ դիրեկտորներ՝ գործը կառավարելու համար։

Ընկերութեան այժմեան դրամագլուխը, 500,000 րուբլի է. հարկաւոր դէպքում կարելի է աւելացնել դրամագլուխը։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Ռոստովի նահանգական դատարանի քրէական գործերի բաժինը գրաւել էր մեծ բազմութիւն։ Մեղադրւում էր Օր. Ա-եան նախկին քաղաքագլուխ պ. Պալապանեանի վրայ ատրճանակ պարպելուն համար։

Դր. Պալապանեանը բացակայ էր. Նրան պաշտպանում էր Դր. Չալխուշեանը, իսկ աղջկայ պաշտպանը՝ Գորոդիսկիյ փաստաբանն էր։ Օր. Ա. մանրամասնօրէն պատմեց, թէ ինչպէս պ. Պալապանեանը փորձել է անպատուել իրեն։ Այդ աղջիկը բացատրեց, որ ատրճանակն արձակել է վրէժ առնելու համար։ Երդուեալ դատաւորները միաձայն արդարացրին օրիորդին։

—Աղքատաց հոգաբարձութեան գործերի քննութիւնը շարունակւում է և արդարութեան տեսակէտից յաջողութիւն է խոստանում։ Նախկին հոգաբարձութեան պաշտպան է հանդիսանում այդ մասնաժողովում միմիայն թեմական դպրանոցի ուսուցիչ պ. Զամբնեանը, որ յամառութեամբ ապացուցանում է, թէ տունը շինող հոգաբարձութիւնն իրաւունք ունէր եղած բոլոր ծախքերն անելու, նաև մսխել դպրանոցին կտակած Դեաչկովի 100,000 րուբլին։

—

ԲԱԳՈՒԻՑ. — Այստեղ վախճանուեց քաղաքիս բժիշկ Խաչատրեանը, որ ծառայում էր գործունէութեան ասպարէզ մտնելու օրից Բագու քաղաքին։ Հանգուցեալը, բնիկ շուշեցի, յարգուած էր և պատուած։ Յուղարկաւորութեանը ներկայ էին, ի միջի այլոց, քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները և քաղաքի դպրոցների աշակերտները։ Քաղաքի կողմից պսակ էր դրած նրա դագաղի վրայ։

Հանգուցեալը դպրոցների կամաւոր բժիշկն էր։

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Ի պատիւ Սմբատ Շահազիզի գրական և մանկավարժական գործունէութեան՝ Մոսկուայում հրատարակուելու է մի ժողովածու։ Մասնակցողները բացառապէս նրա նախկին աշակերտներն են լինելու։ Բովանդակութիւնը բազմակողմանի է լինելու, իսկ հրատարակութիւնը շքեղ։ Հետաքրքրական կլինէր այդ ժողովածուի մէջ տեսնել Ս. Շահազիզի բոլոր աշակերտների ցանկը, որ դժուար չէ կազմել Ղազարեան ճեմարանի և Մոսկուայի առևտրական ուսումնարանի թղթերից։

—

Հոկտեմբերի մէջ Բեռլինի բեմերից մէկի վրայ առաջին անգամ ներկայացուեց տաղանդաւոր դրամատուրգ Հաուպտմանի նոր պիէսը՝ «Das Friedensfest» (Խաղաղութեան տօնը)։ Պիէսի սիւժէն վերցրած է առօրեայ ընտանեկան կեանքից և աչքի է ընկնում իւր խոր հոգեբանական վերլուծութեամբ։

—

Կիևում հրատարակուող «Россія и Азія» շաբաթաթերթը նոյեմբեր ամսից փոխել է իր ձեւն ու դիրքը, հրատարակուելով նոյն ուղղութեամբ և ծրագրով։ Աշխատասէր խմբագիրը խոստանում է նոր բաժանորդներին իբրև յաւելուած տալ Կովկասի, Հրէաստանի, Կամչատկայի վերաբերեալ յօդուածների ժողովածուներ և Ծերենցի շարադրութիւնների լիակատար ռուսերէն թարգմանութիւնը։ Եթէ վերջին խոստումը կատարուի, այն ժամանակ մենք առաջին անգամ կունենանք հայ գրողի երկերի լիակատար թարգմանութիւնը։

—

Նշանաւոր վիպասան Բեօրնստերնէ Բեօրնսոնը յայտնի է և իբրև տաղանդաւոր դրամատուրգ։ Նրա պիէսներն առանձնապէս աչքի են ընկնում իրենց խոր գաղափարներով և քարոզած իդէալներով։ Այժմ ծերունի հեղինակը գրել է մի նոր դրամա «Պաուլ Լանգէ և Տորա Պարսբէրգ» վերնագրով։ Բովանդակութիւնը վերցրած է Նորվեգիայի ինտելիգենցիայի և մանաւորապէս պարլամենտական շրջանների կեանքից։ Հեղինակը մեծ խնամքով է վերաբերուել դէպի հերոսն ու հերոսուհին և դէպի այն անձերը, որոնք գործնական դեր են կատարում բեմի վրայ կատարուող յափշտակիչ դրամայի մէջ։

Լաւ կլինէր, որ այդ դրամատիկական նորութիւնը թարգմանուէր և հայոց բեմի վրայ երևար։

—

Յայտնի է, որ հանճարեղ կոմպոզիտոր Մոցարտի գերեզմանը մինչև այժմս չեն կարողանում գտնել այն պարզ պատճառով, որ թաղելուց յետոյ միւս օրն արդէն գերեզմանոցի պահապանը չգիտէր, թէ որտեղ են թաղել «մի ինչ-որ պ. Մոցարտին»։ Այժմ Վիեննայի Saint-Mare հանգստարանում գտել են մի գերեզմանաքար, որի վրայ գրուած են Մոցարտի անուան և հօր անուան սկզբնատառերը, ազգանունը, ծննդեան և մահուան թուականները. Թէ արդեօք այդ քարի տակ են գտնւում հռչակաւոր երգահանի նշխարները—դեռ հարց է և կարօտ է հետազօտութեան։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ ԲԱԳՈՒՈՒՄ

I

Նոյեմբերի 24-ին խաղացուեցին Սուվօրինի և Բուրենինի 4. գործ. «Մեդէա» դրաման։

Այս պիէսը մի քանի անգամ անցեալ տարի խաղացուել է և դրա մասին իր ժամանակին գրուել է, այնպէս որ մեզ ասելու ոչինչ չէ մնում, բայց տիկ. Սիրանոյշն այդ դերն այնքան զօրեղ և գեղարուեստօրէն է խաղում, որ մարդ ակամայից ուզում է նրա խաղի առթիւ էլի խօսել։

Նրա խաղը նման է մի մեղմ բոցի, որ սկզբում տեսքով և գեղեցիկ է ու հաճելի, բայց կամաց կամաց այդ բոցը տարածւում է, ծաւալւում է և յուսահատ ճարճատիւնով սկսում է ամեն մի հանդիպած բան բոցավառել, այրել, տոչորել. հազարագլխեան վիշապի նման իւր հրեղէն լեզուներն ամեն բան լափում, ոչնչացնում են իւր շուրջն աւեր դարձնելով, մինչև որ ինքն էլ իրեն այրում է և ոչնչանում։

Ճիշտ նոյնն է կատարւում և տիկ. Սիրանոյշի խաղի ժամանակ զգացմունքը սէր դէպի ամուսինը, սէր դէպի որդիքը և մարդիկ. այդ զգացմունքն սկզբում մեղմ է և հաճելի, բայց կամաց կամաց բորբոքւում է, սաստկանում է և փոխւում է մի անկուշտ կրքի՝ նախանձի և վրէժխնդրութեան, որը, հրդեհի հրեղէն լեզուների նման, այրում, տոչորում է նրա մէջ ամեն մի ուրիշ զգացմունք դէպի մարդիկ, դէպի ամուսինը և նոյն իսկ սէր դէպի իր պաշտեցեալ զաւակները. Նա մի կատարեալ մարմնացումն է վրէժխնդրութեան. ամեն մի զգացմունք մեռցնելուց յետոյ՝ հակառակորդից վրէժխնդիր լինելուց յետոյ, ինքն էլ,

---

սին ամբողջապէս և հարկ չկայ վերցնել նրա վէպերից միմիայն կանանց։ Մանաւանդ որ Գ. Զուրաբը իր վէպերի մէջ երևան է գալիս և իբրև գեղարուեստագէտ, և իբրև հրապարակախօս, և տղամարդկանց նուիրում է ոչ պակաս ուշադրութիւն։ Չենք կարող չնկատել և այն, որ յօդուածի մէջ ցիր ու ցան զետեղուած ցիտատները ծանրաբեռնում են մեր ուշադրութիւնը և դժուարացնում ընթերցանութիւնը։ Հասկանալի է, որ ցիտատները շատ տեղ պէտք են գալիս, բայց պիտի աշխատել օտար լեզով գրուածքները թարգմանել (եթէ ոտանաւոր չէ) և աշխատել չափից չանցնել։

Գ. Զուրաբի մասին քննադատութիւն լոյս տեսնելը գուցէ ունենայ և այն հետևանքը, որ ինքը՝ տաղանդաւոր վիպասանն սթափուի և գրիչը ձեռքի առնելով տայ մեզ աւելի ևս գեղեցիկ և հասուն երկեր։ Ցաւալին այն է, որ Գ. Զուրաբն ամենայնիւ օժտուած է վիպասան լինելու՝ նա ինտելիգենտ է, ունի գեղեցիկ գրիչ, վառ երևակայութիւն, կեանքի փորձառութիւն. չունի միայն համբերութիւն և սէր դէպի գրական վեհ գործը։ Թէ չէ նա ինչու չի գրում. պատճառները մութն են։

Գ.

Այս տարի բանաստեղծութիւնների կողմից առատութիւն է. լոյս տեսան Յ. Յակովբեանի, Յարութիւն Թումանեանի, Լ. Մանուէլեանի, Դերենիկ Դեմիրճեանի և այլոց բանաստեղծութիւնների փոքրիկ ժողովածուները։ Սրա վրայ աւելացրէք անցեալ տարուայ վերջին լոյս տեսած Ա. Ծատուրեանի բանաստեղծութիւնների երկրորդ հատորը և Աւ. Իսահակեանի «Երգեր ու Վէրքեր» հատորիկը։ Լոյս տեսան նոյնպէս զանազան բանաստեղծութիւնների ժողովածուներ։ Ես լսել եմ, որ Յովհ. Յովհաննիսեանն էլ պատրաստում է իւր բանաստեղծութիւնների երկրորդ հրատարակութիւնը, որի մէջ մտնելու են, բացի արդէն լոյս տեսած ոտանաւորներից, և շատ նոր ոտանաւորներ։

Մի խօսքով Պառնասի վրայ մեծ խնճոյք կայ։ Սակայն «բազումք են հրաւիրեալք և սակաւ ընտրեալք»։

Վերոյիշեալ մեր երիտասարդ բանաստեղծներից մի քանիսն արժանի են ամենայն ուշադրութեան, իբրև իսկական բանաստեղծական շնորհք ունեցողներ։ Միւսները, ընդհակառակը, իրենց ոտանաւորներով մեզնից միայն ի զուր տեղը ժամանակ են խլում։

Կարդացէք, օրինակ, Յ. Յակոբեանի «Բանաստեղծութիւններ» գրքոյկն սկզբից մինչև վերջը, նրա բոլոր 37 ոտանաւորները, որոնցից տասնի չափ թարգմանութիւններ են, կարդացէք և ասացէք՝ ինչու է գրել հեղինակն այդ ոտանաւորները, ինչ է նա ուզում ասել, ինչ մի նոր բանաստեղծական պատկեր է նա տալիս, կամ ինչ մի նոր գաղափար երգում։ Ես ոչ մի ոտանաւոր այստեղ չգտայ, որ, իմ կարծիքով, իրաւունք ունենար «բանաստեղծութիւն», «պօէզիա» անունը կրելու. բոլոր ոտանաւորները յատուկ յօրինած, թխած բաներ են, և չես հասկանում՝ ինչն է ստիպում հեղինակին անպատճառ բանաստեղծների շարքը մտնել. բայց ինչպէս որ չկան աչքի ընկնող, գեղեցիկ ոտանաւորներ, այնպէս էլ չկան և ձև ու բովանդակութեան կողմից բոլորովին անպէտք բաներ. այս ոտանաւորները միջակ, անալի, առանց բանաստեղծական աւիւնի, բայց ոչ առանց մտածելու գրուած կտորներ են, որ կարող էին իսկի լոյս չտեսնել։ Բացի դրանից՝ ոտանաւորներից մի քանիսը բանաստեղծական ներքին պատկերաւորութիւն չներկայացնելով հանդերձ արտաքին ձևի կողմից էլ մօտենում են արձակ գրուածքի. օրինակ՝ «Գիւղական բալլադա», «Չարդ առնեմ», «Ախ, իմ սրտին», «Մեր ցաւը մեծ է» և այլն։ Թարգմանութիւնները յաջող են, թէպէտ և բնագրերին շատ մօտ չեն. դա մեր թարգմանիչների ընդհանուր ցաւն է։ Ոտանաւորների չափն էլ շատ տեղ անկանոն է, լեզուն միօրինակ, յանգերը (ռիֆմ) աղքատ։ Ուրեմն երևակայեցէք՝ ինչ տպաւորութիւն կարող է ստանալ ընթերցողն այդ ոտանաւորներից։ Այս «բանաստեղծութիւնները» կարդալուց յետոյ ես ստիպուած եմ հռովմայեցու նման բացականչել «Oleum et diem perdidi». Եւ այս ոչ միայն Յ. Յակոբեանի գրքոյկի մասին է, այլ և այն բոլոր «ոտանաւորչի»-ների մասին, որոնց թիւը դժբախտաբար օրէ ցօր աւելանում է։

Դ.

Պոլսեցի քննադատներն իրաւունք ունէին խիստ և անողոք քննութեան ենթարկելու մեր այսպէս կոչուած «երիտասարդ բանաստեղծներին»։ Սակայն, ի հարկէ, մենք իրաւունք ունենք իրենց փողն իրենց վերադարձնելու։ Պոլսեցի գրագէտներն ասում են, որ այն գրուածքները, որ մենք «բանաստեղծութիւն» ենք անուանում, իսկապէս կարճ տողերով գրուած տափակ զգացումներ և տարրական մտքեր են։ Ես համաձայն եմ, որ մեր պարբերական հրատարակութիւններն ինձ անհասկանալի պատճառներով չեն կարողանում ընտրութիւն անել ոտանաւորների մէջ և ինչ ասես տպում են։ Բայց ինչ ասենք, որ նոյնը կրկնւում է և արևմտեան հայերի պարբերական հրատարակութիւնների մէջ։ Օրինակի համար մէջ բերեմ մի քանի ոտանաւոր, որ առանց փնտռելու և ջոկելու առնում եմ «Փիւնիկ», «Մասիս» և «Անահիտ» թերթերից։

«Փիւնիկ»-ում, տպուած «Առ Խաչեցեալն» վերնագրով մի ոտանաւորից իբրև նմուշ բերեմ չորրորդ տունը.

Քա՛ւ, Փրկիչդ իմ, քա՛ւ ինձ լինի
Դողալ մահուան յանդիման,
Այլ, եղի՛ց գիս, զի ընտրեալ
Կանուխ՝ կենաց ըզպայման.
Բիւրիցս եղուկ, զի ո՛չ համբեր
Անձն իմ սիրոյն ընդ ոգոր.
Զի վաղ բարձի զբեռն անտրբեր,
Ըզկենցաղոյս աղցաւոր։

Նոյն ոճով, նոյն դժուարութիւններով, նոյն կեղծ զգացմունքներով հեղինակը լցնում է տասնևերեք տուն։ Մեր մէջ հազիւ թէ մէկն այդպիսի ոտանաւոր գրէ. այժմ դա անախրոնիզմ կլինէր։

Վերցնում եմ «Անահիտ»-ի վերջին համարը։ Այստեղ ի միջի այլ ոտանաւորների տպուած են «գեղարուեստագէտ» ճանաչուած Վ. Սվաճեանի ոտանաւորները։ Կարդացէք և ասացէք՝ ինչ են դրանք, եթէ ոչ փքուած բառերի կուտակում, կեղծ ոգևորութիւն և անտաշ յանգաւոր տողեր.

«Լըճին ափանց մօտ, խառերու մէջ նստած,
Ընչելով վառ օդ մը ննջամբ թուխ ու թայ,
Մեծ սևախայտ կովերն արծած կորանան»։
և այլն։

Մեծապատիւ պ. Սվաճեանը հաւատացնում է, որ դա բանաստեղծութիւն է և կոչւում է «Ծովակուլը»։ Արդեօք պ. խմբագիրն էլ համոզուած է, որ պ. Սվաճեանի գրուածները բանաստեղծութիւններ են։

«Մասիս»-ի մէջ էլ մի ուրիշ էֆէնդի ուզում է մեզ համոզել, որ այժմ էլ կարելի է գրել այնպէս, ինչպէս գրում էին կեղծ-դասականները և իբրև նմուշ տալիս է «Յիշէ զիս» ոտանաւորը. ահա դրա առաջին տունը.

«Ոսկեձեղուն, մետաքսապատ և հարուստ
Սրահներու մէջ, ուր շողշողուն շարունակ
Աչք-աղամանդ, ճակատ-բիւրեղ, շրթունք-բուստ,
Եւ բուրեն բիւր փափուկ ծաղկունք գեղունակ.
Երբ քեզ նըման կուսանաց հետ սիրաթունչ
Խօսիս, երգես, խայտաստաբես և զըւարթ
Կարմրիս ջինջ, շնորհալից անդ մի փունջ
Որը դու զոլով անզուգական զարդն ու վարդ
Պատիր գիմօք ժպտիս, շիկնիս ու նայիս...
—Յիշէ պատրեալն, յիշէ զիս»։

Եւ այս գոհարը մենք գտնում ենք այն «Մասիս»-ի մէջ, որի խմբագրներն ու քննադատները բոմ բարձրացրած աջ ու ձախ քարոզ են տալիս գեղարուեստի, գեղեցիկի և այլ այսպիսի փափուկ խնդիրների մասին։

Ոտանաւորի հեղինակին՝ պ. Այվազեանի դառնալով մնում է ինձ իր խօսքերից «շնորհալից մի փունջ» կազմել և ասել, «որ դու զոլով անզուգական» բանաստեղծ-կամեցածիդ չափ «խօսիս, երգես, խայտաս, պարես», բայց ոտանաւոր չգրես. իսկ աւելի քրտինքով յանգեր որոնելիս՝ «յիշէ զիս»։

Մինաս Բերբերեան

հրդեհի վերջին բոցի նման, իրեն այրում և ոչնչացնում է։

—

II.

Նոյեմբերի 27-ին ի նպաստ դերասան Գր. Աւետեանի խաղացին քանիցս կրկնուած «Զաւակ» դրաման և, տիկ. Աւետեանի մասնակցութեամբ, «Ծերուկը հանաք է անում» մէկ. գործ. վոդեվիլը։

Գր. Աւետեանը հայոց խմբի այն սակաւաթիւ անդամներից մէկն է, որը հայոց բեմը սիրում է ոչ թէ իբրև մի եկամուտի աղբիւր, այլ իբրև մի գեղարուեստի տաճար, ուստի միշտ վերաբերուել է իւր պարտականութեանցը բարեխղճաբար և մեծ սիրով, և այդ իսկ պատճառով հասարակութեանը միշտ սիրելի է եղել, որն (ի բաց առեալ մեծամեծները, շտապել էր իւր ներկայութեամբ պատուել նրա բենեֆիսը։ Գ. Աւետեանին սրտանց ծափահարում էին։ Մատուցեցին մի թանկագին ընծայ և մի մի ծրար՝ դրամով։ Այդ երեկոյ պ. Աւետեանը խաղում էր Անդրէի դերը, որը բաւականին լաւ կատարեց։

Տիկ. Սիրանոյշը Մագդէնի դերը բանիցս խաղացել է և միշտ բուռն ծափահարութեանց է արժանացել. միայն ափսոսում ենք, որ յարգելի տիկինը իւր աշխատանքը, բարձր ընդունակութիւնները վատնում է մի այդպիսի անհամ և անհոտ մելոդրամայի վրայ։ Պիտի առարկեն, թէ դերասաններն արդարանում են նրանով, որ ժողովուրդը սիրում է այդ պիէսը, բայց թատրոնը չի կարող առաջնորդուել ժողովրդի ճաշակով. Նա ինքը պիտի առաջնորդի ժողովրդին դէպի ճշմարիտը և դէպի գեղեցիկը և ոչ թէ նրանից հրահանգներ սպասէ։

Վերջին վոդևիլը շատ կենդանի անցաւ շնորհիւ տիկ. Աւետեանի, որն ահա երկու տարի է հայոց բեմից հեռացել է և այդ երեկոյ, իւր ամուսնու բենեֆիսի առթիւ, բեմ էր դուրս եկել։ Կենդանի էին և բաւական զուարճացրին Աւետեան և Վրոյր։

Գիլ Աղամ

Բաքու, 1 դեկտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՆՁԱԿ, 29 նոյեմբերի.—Օրուայ խօսակցութեան առարկան հացի պակասութեան և գինու առատութեան խնդիրն է։ Վերջին 5–6 տարիների ընթացքում նահանգումս ստացուող հացահատիկները, ոչ թէ անցեալ տարիների նման մեծ քանակութեամբ արտահանւում են Ռուսիա կամ կովկասեան այլ քաղաքներ, այլ մեծ դժուարութեամբ և հազիւ հազ բաւականութիւն են տալիս նոյն իսկ տեղական պահանջներին, իսկ շուկայ մտած հացահատիկի քանակութիւնն այնքան աննշան է, որ եթէ հալաւիներն անգամ աններու չը լինեն և թողնուեն միայն հասարակութեան համար, դժուար թէ շուկայում գներն իջնեն։ Նրանք, որոնք իրենք են եղել մինչև այժմ քաղաքին հաց մատակարարողները, նրանք են ներկայումս շուկայի հաց սպառողները և թանկացնողները։ Երկու ամսից աւելի է, որ գիւղացին հաց ծախելու փոխարէն ինքն ստիպուած է Գանձակի հրապարակից հաց գնելու։ Եթէ մեր յոյսը Գանձակի նահանգի արդիւնաբերութեան վրայ մնար, և Ռուսիայից հացահատիկ ներս չմտնէր Գանձակ, հացն այնքան թանկ կլինէր, որ ուղղակի անտանելի կլինէր գանձակեցիների և շրջակայ գիւղացիների դրութիւնը, բայց շնորհիւ Ռուսիայից ստացուող՝ թէև բաւական ստոր տեսակի ալիւրներին, գները մընում են 1 ր. 20 կոպէկից մինչև 1 ր. 50 կոպ.։ Աւելի զարմանալին այն է, որ Գանձակին հաց մատակարարը Ռուսիայի սովի հռչակ վայելող նահանգներն են, ինչպէս Սարատովի և Պոլտաւայի նահանգները, որոնք հազար վերստեր հեռու են մեր քաղաքից։

Մի քանի տարի առաջ, երբ Ռուսիայում սով էր տիրում, Կովկասը ոչ պակաս հաց արտահանից դէպի Ռուսիայի սովատանջ գաւառները, իսկ Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնն իսկական սակագնից 50%, պակասեցրեց, որը, ինչ ասել կուզէ, աւելի նպաստեց մեծ քանակութեամբ հաց արտահանելու սովատանջ նահանգները։ Եւ պէտք է ասել, որ եթէ երկաթուղու վարչութիւնն այդ շնորհն անէր նաև մեզ համար, մենք էլ էժան հաց ստանալու հնարաւորութիւն կունենայինք։ Գանձակցիք մանրավաճառութիւնից զբաղուող մի զգալի օգուտ չեն ստանում և, ինչպէս իրենք են ասում, օրեր են միայն մթնեցնում. իսկ նրանք, որոնք պարապում են երկրագործութեամբ և այգեգործութեամբ, դրանք էլ մի նախանձելի վիճակ չունին։ Այն չարքաշ կեանքը, այն անասելի նեղութիւններն ու դժուարութիւնները, որ նրանք կրում են ամառը ջրի պակասութիւնից և անկարգ ջրբաժաններից, զերոյի են հաւասարեցնում ստացած օգուտը։ Եւ եթէ մօտիկից ծանօթանանք տեղական տնտեսական վիճակին, կըտեսնենք, որ հայերն ու գերմանացիներն ամենից աւելի վնասուողներն են։ Գանձակը յայտնի է իւր գինիներով և անուշահամ մրգերով. առաջնի առևտրով, առանց բացառութեան, պարապում են հայերն ու գերմանացիները. իսկ մրգեղէնի առևտրով պարապում են առանձնապէս թուրքերը. Քրիստոնեաները չբաւականանալով իրենց այգիներից ստացուող գինով, այլի ունեցածն էլ, չունեցողին հետևելով շիա դաւան թուրքերից խաղող է առնում և բէքմէզ ու քացախ շինելու պատրուակով գինի պատրաստում։ Ինչ ասել կուզէ, որ պարսիկն ինքն իրեն խաբում է. նա լաւ գիտէ, որ իրենից առած ահագին քանակութեամբ խաղողը ոչ քացախի և ոչ բէքմէզի համար են առնում հայերը, այլ գինի շինելու համար, բայց նրա համար ինչ փոյթ. բաւական է, որ առնողը քացախ կամ բէքմէզ շինելու անունով է առնում. շարիաթը նրան չի արգելում ծախելու իւր խաղող այդպիսի քրիստոնեայ գնողների վրայ։ Բոլորովին ուրիշ կարծիքի են սիւննի դաւանութեան պատկանող Քիւրդամիրի պարսիկները. Նրանք ուղղակի գինի շինելու համար իրենց բաղերի խաղողները ծախում են քրիստոնեաների վրայ։ Եւ չնայած, որ վերջին տարիներում գինի շինողներն զգալի վընասներ են կրում, սակայն «այս տարի գուցէ լաւ լինի» ասելով, նրանք շարունակում են ահագին քանակութեամբ գինիներ պատրաստել, վերջը վնասով ծախելու համար։

Սրանից 5—6 տարի առաջ բեռն 75—80 րուբլով ծախուող գինիքը ներկայումս մեծ դժուարութեամբ ծախւում են 20—18—15 րուբլով, իսկ աւելի բարդաւորները ծախում են 30 րուբլով։ Այս գներով ծախւում է կարմիր գինին։ Իսկ սպիտակ գինու յարգը վերջին երկու տարումը բարձրացել է—այդ գինին ծախւում է գրեթէ կրկնապատիկ գներով։ Չենք իմանում, այդ բանն ինչին պէտք է վերագրել, բայց շատերի կարծիքով այգետէրերն սպիտակ խաղողի վազերը կտրելով, Կախէթի սև տեսակ խաղողի վազեր են փոխարինել, և գինին (սպիտակը) սակաւ լինելով, գներն զգալի կերպով բարձրացել են։ Իսկ ոմանց կարծիքով, սպիտակ գինին նոր է գործածութեան մէջ մտնում, այդ պատճառով գներն օրէ օր բարձրանում են։ Թուրքերը և գերմանացիներն էլի լաւ են, որ իրենք են այգու վերաբերեալ բոլոր մշակութիւնը կատարում, իսկ հայը իւր այգին գնում է միայն մշակներին բանեցնելու և վերահասու լինելու համար. Նա մինչև անգամ չի մտանում իւր հետ վերցնելու մաթաքան աքսերի մօտ վրան կըրթնելու համար։ Այս բանը գուցէ շատերը ծուլութեան վերագրեն, բայց այդ կարծիքը սխալ կլինի. ճշմարտութիւնն այն է, որ հայ այգետէրերից շատերը լայեղ են անում այգում գերմանացու կամ թուրքի նման մշակութիւն անելու, իսկ ոմանք, չնայած որ 80 տարուց աւելի է այգի են մշակել տալիս, չեն հասկանում այգու լեզուն. այդ է պատճառը, որ մէկն այգին մշակում-կապում է նոյեմբերին, մի ուրիշը փետրուարին, մարտին. մէկն էլ աղբով պարարտացնում է դեկտեմբերին, միւսն ապրիլին, մէկն աղբը տալիս է արևի մէջը, մի ուրիշը վազան տակը. մէկն աղբը տալիս է յետոյ վարում, միւսը վարում, յետոյ տալիս... հայերի այգիների մշակութիւնը, անխըտիր բացառութեամբ, կատարում են կամ շրջակայ հայ գիւղացիք, կամ Դաղըստանից եկած լազգիներն ու Գեօքչայից եկած հայ մշակները։ Եւ պէտք է ասել, որ տարուայ ամեն եղանակում տեղիս այգիներում մշակութիւնն անպակաս է, որից պակաս աղբիւր չէ ստանում մշակ դասակարգը։ Այն հանգամանքը որ հայերից շատերն իրենց այգիները կամ գրաւ են դնում, կամ ծախում են գերմանացիների վրայ, պէտք է վերագրել գինու գների ընկնելուն։

Բոլորովին ուրիշ պայմանների մէջ են գտնւում պարսիկները. Նրանք են հաւ մարեա մշակում իրենց այգիները, նըրանք իրենց գործը տանում են նահապետական ձևով, ոչ մելաիւի և ոչ ֆիլոքսերայի դէմ ոչ մի միջոց գործ չեն դնում, և ոչ աշխատում են վազն ազնուացնելու. Շահ-աբասի ժամանակից մնացած նոյն վազները մինչև օրս պահում, մշակում են և ստացուած գինու մի մասը ծախում են և միւս մասը պահում ձմեռը թանգ ծախելու համար։

Անցեալները փորձեր եղան տեղական մրգերը խցանի (պրոբկա) Թիֆլիս մէջ տակառներով տանելու աւելի հեռաւոր քաղաքներ, սակայն, ինչպէս լսեցինք, հեռաւորութեան պատճառով մրգերը չդիմանալով ճանապարհին փչացան, ի վնաս տէրերի։ Այս տարի պարսիկներն առաջին օրից սկսած խաղողը ծախեցին 1 ր. 20 կոպ., ապա աստիճանաբար գներն աւելացրին պուդին 2 ր. 80 կոպ. մինչև երեք րուբլի, հետևաբար թուրքերը մի պուդ խաղողից 3-4 անգամ աւելի օգուտ են ստանում հայից, այն էլ առանց նեղութիւնների։ Իսկ գերմանացին և հայը գինիքը նկուղներում տեղաւորելով անհամբեր սպասում են, թէ երբ պէտք է գալու Վանեան կամ Մանուչարը բարեհաճի թիֆլիսեցի մի հաստափոր շիրազ կամ վրացական մի մեքել մուշտարի բերելու, կամ երբ պէտք է գինին շուռ գայ, որ Հումկլի և Փարիզի բաղը բացուի, առնեն էժան գնով (40 կոպ. կամ 50 կոպ. վեդրան—27 ֆունտը) օղի կամ կոնեակ քաշելու համար, ինչպէս այս տարի առան գերմանացիների շատերի գինիքը։

Եթէ հաւատանք տարածուած կարծիքներին, գինու գների այս աստիճան ընկնելու գլխաւոր պատճառներից մէկն էլ մի քանի միջնորդներն են, որոնք ներկայումս իրենց ճարպկութեան շնորհիւ տասնեակ հազարների տէր են դառել այդ արհեստի շնորհիւ։ Այն գինի առնողները, որոնք մտնում են Գանձակ, առանց այդ մակլերների գինի չեն առնիլ. և այդ դալալները որքան հաւատարիմ են իրենց ցոյց տալիս դէպի եկւոր առնողները։ Դալալները ճանաչում են զատկի ձուի նման բոլոր գինի ծախողներին, թէ ով է էժան տուողը, ով աւելի փողի պահանջ ունի և ում գինուն կարելի է «ոտք ձգել», յետոյ առնել. Նըրանք դիմում են այդ աղքատ կանանց և նոյնքան աղքատ մարդկանց, որոնց գինիքն առնում են ամենաանշան գներով, այնուհետև որոշ գին են սահմանում. ով որ կըհամարձակւի դալալի որոշած գնից աւելին պահանջելու, նա ստիպուած կըլինի վերջն աւելի տուժելու։ Զարմանալի հակասութիւն այն գինին, որ այգետէրերը շիշը ծախում են 5—6 կոպ., միևնոյն գինին եթէ տեղիս հիւրանոցներում կամ ճաշարաններում խմելու լինիք, պիտի վճարէք 40 կոպ., 60 կոպ., նոյն իսկ 80 կոպ.։ Իսկ միևնոյն գինին մեզնից ոչ այնքան հեռու գտնուող Բագուում կամ Բաթումում գանձակցի գերմանացի գինեվաճառները վեդրան ծախում են 2 րուբլուց սկսած մինչև վեց րուբլի։

Աւ. Ս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՄԱՍՆԱՒՈՐ ՆԱՄԱԿՆԵՐ ՏՐԱՆՍՎԱԱԼԻՑ

Այժմ մեծ քանակութեամբ մասնաւոր նամակներ են ստացւում Տրանսվաալից, որոնք մեծ մասամբ տպագրւում են գերմանական թերթերի մէջ։ Նամակագրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները.

Անգլիացիներն առհասարակ լաւ զինուորներ են և քաջութեամբ կռւում են, երբ համախմբուած են, բայց հէնց որ ստիպուած են լինում կռուել ջոկ-ջոկ կամ այսպէս կոչուած փոքր ճակատամարտների մէջ, ուր բոէրները վարպետներ են հանդիսանում, անգլիացիներն ստիպուած են լինում նահանջ տալ թշնամու առաջ։ Բոէրների բանակում հազարաւոր տակտիկներ կան, նրանցից իւրաքանչիւրին առաջուց յայտնի է, թէ ինչպէս պիտի վարուեն այս կամ այն դէպքում. իսկ անգլիացիները կարող են աջողութեամբ գործել միայն միասին։ Մեծ մասամբ անգլիացիները նահանջ են տուել. և այդ բանը նրանց բաւական թանկ է նստել։ Նրանք, որոնք պատերազմն սկսուելուց առաջ, եղել են Եօհաննէսբուրգի անգլիացիների շրջանում, լաւ յիշում են, թէ ինչպէս այդ շրջաններում ծաղրում էին բոէրներին, իսկ այժմ անգլիացի գերիները բոլորովին ուրիշ կերպ են խօսում բոէրների մասին։ Անգլիացիներն ապշած են մնացել բոէրների օրինակելի վարմունքից։ Գերի բռնուած անգլիացի մի սպայ Ստանդերտոնից Պրետորիա գնալիս հաւատացնում էր, որ ինքը իւր ականջով լսել էր, թէ ինչպէս գեներալ Ուայտը բացականչել էր. «Այս պատերազմը կվերջանայ նրանով, որ Հարաւ Աֆրիկեան հասարակապետութիւնը մեծ պետութիւն կըճանաչուի»։ Միևնոյն գեներալը մի անգամ հետևեալն է ասել. «Մի հանրապետութեան դէմ, որը լի է այն գիտակցութեամբ, թէ ինքը կռւում է հայրենի օջախի, ընտանիքի և ազատութեան համար, մենք ոչինչ չենք կարող անել»։

Առհասարակ այնպէս է երևում, որ շատ անգլիացիներ յուսահատուել են ժամանակից, երբ փորձով համոզուել են, որ veni, vidi, vici գործադրելու մասին խօսք անգամ չի կարող լինել։ Նամակագրներից մէկն անձամբ տեսել է, թէ ինչպէս Պրետորիայում մի քանի գերի անգլիացիներ դառնագին լաց էին լինում։

Եւրոպայում առհասարակ տրամադիր են կարծելու, որ այժմ, երբ Տրանսվաալի ամբողջ այր-բնակչութիւնը պատերազմի մէջ է, այդ երկիրը թողնուած է բաղդի քմահաճոյքին։ Բայց իրողութիւնն այն է, որ այնտեղ ամեն ինչ բարեկարգ վիճակի մէջ է։ Այն բոէրները, որոնց հրամայուած էր նստել տանը և որոնք այդ պատճառով յուսահատութիւնից չէին իմանում՝ ինչ անեն, այժմ հանգստացել են և շարունակում են իրենց տնային գործերը։ Առևտուրը և առհասարակ գործերն առաջ են գնում այնպէս, որ կարծես թէ պատերազմ ամենևին չկայ։ Երկաթուղիները բանում են կանոնաւորապէս, փոստային և ապրանքատար հաղորդակցութիւնները շարունակւում են առաջուայ պէս։ Ճիշտ է, այժմ սևամորթ բանուորների թիւն աւելացել է, քան խաղաղ ժամանակ, բայց այդ բանից սևամորթները խիստ գոհ են, ուստի և սպիտակամորթների դէմ ապստամբելու մասին ամենևին չեն մտածում։ Գրեթէ ամեն օր Հայդելբերգի և Եօհաննէսբուրգի վրայով երկաթուղու գնացքներն անգլիացի գերիներ են անցկացնում, և այդ բանին բոէրները նայում են հանգիստ կերպով։ «Այդպէս էլ պէտք է լինէր», ասում են նըրանք։ Դժուար թէ աշխարհիս երեսին լինի մի ուրիշ ազգ, որ այնքան հաւատալիս լինի Աստծուն, որքան բոէրները։ Նրանք ամենքն էլ խորապէս համոզուած են, որ Աստուած իրենց հետ է, և թէ Տրանսվաալը չպիտի կործանուի։ Եւ այդ հաւատն առ Աստուած դեռ ևս շատ անգլիացիների արիւն թափել կըտայ։ Իւր անկախութեան և ազատութեան համար հերոսաբար կըռուող այդ ժողովրդի բնաւորութեան մի քանի գծերը յիշեցնում են հին սպարտացիների քաջութիւնը։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՅՍԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

Բոէրներով պաշարուած Կիմբերլէյ և Լէդի-Սմիտ քաղաքների հետ հաղորդակցութիւնը բոլորովին կտրուած լինելով, անգլիացիներն այդ քաղաքների հետ խօսում են ելեքտրական լոյսի ազդանշաններով, և այդ կողմից եղած փորձերը, ըստ երևոյթին, աջողութիւն ունին։ Ահա թէ Մոդեր-Րիւերից, նոյեմբերի 18-ից, ինչ են հաղորդում Լոնդոնի «Evening News»-ին.

«Երեկ մենք մեր աչքով տեսանք որ, Կիմբերլէյը հեռու չէ մեզնից։ Շուտով մութն ընկնելուց յետոյ ամպերի դաշտերի վրայ երևաց պրոժեկտորի արձակած լոյսի մի շերտ և ապա այդ լոյսի հաւու ազդանշաններով Մորզի հեռագրական այբուբենի կէտեր և գըծեր սկսեցին նկարուել։ Գնդապետ Ռոգոն իսկոյն սարքեց իւր պրոժեկտորը, և մենք մի ժամուայ ընթացքում ողջոյններ և տեղեկութիւններ էինք փոխանակում պաշարուած քաղաքի հետ։ Կիմբերլէյի բնակչութիւնը լի է յուսով և լաւ է զգում իրեն իւր հողի ամրութիւններով»։

—

ԹՈՒՐՔԻԱ և ԱՆԳԼԻԱ

«Köln. Zeit.»-ի Կ. Պոլսի թղթակիցն անզգոյշ քայլ է համարում այն հանգամանքը, որ անգլիական դեսպանն ընդունել էր Տրանսվաալի պատերազմի առթիւ Վիկտորիա թագուհուն և Մեծ Բրիտանիայի համակրութիւն յայտնող թուրք պատգամաւորութիւնը։ «Ամեն ոք,—ասում է նա, ով փոքր ի շատէ ծանօթ է թիւրքական կարգերին, կարող էր առաջուց հաւատացած լինել, որ այդ բանը թուրք շրջաններում չափազանց աննպաստ տպաւորութիւն կըթողնէր։ Արդէն առանց այն էլ թուրք կառավարութիւնը խիստ կասկածոտ աչքով է նայում «հասարակաց կարծիքի» ամեն տեսակ արտայայտութիւններին, իսկ երբ այդ կարծիքը դիմում է նոյն իսկ մայրաքաղաքում օտարերկրեայ պետութեան ներկայացուցչին, այդ բանն ուղղակի ոտնձգութիւն է համարւում փադիշահի բարձրագոյն իրաւունքներին դէմ և կոպիտ խանգարում դիւանագիտական սովորութիւններին։ Այս դէպքում թուրք պատգամաւորութեան ընդունելն անզգոյշ քայլ էր մանաւանդ այն պատճառով, որ անգլիական դեսպանին ներկայացող պատգամաւորների մէջ կային մի քանի երդուեալ երիտասարդ-թուրքեր և դաւադիրներ։ Այս պատճառով երեքն իսկոյն ձերբակալուեցին։ Մինչդեռ O'Կոննորն այնքան քիչ բան էր հասկանում պատահածից, որ եռանդով պահանջեց իսկոյն ազատ թողնել ձերբակալուածներին։ Սուլթանը զիջեց դեսպանի պահանջին. քննութիւնը դադարեցրին և ձերբակալուածներին ազատ արձակեցին։ Սակայն տարակոյս չկայ, որ այս բոլոր միջնադէպը չի աւելացնիլ անգլիական դիւանագիտութեան հեղինակութիւնն ու ազդեցութիւնն Արևելքում։ Արդէն առանց այն էլ այժմեան դեսպանի նախորդը, սըր Փիլիպպ Կըրրին, իւր անհաճոյ բնաւորութեամբ և խիստ վարուելողութեամբ անգլիական ազդեցութիւնը Կ. Պոլսում նուաստացրեց ցարդ չտեսնուած աստիճանի, իսկ այժմ սէր Օ'Կոննորը, թերևս ինքն էլ չցանկանալով, վարուեց այնպէս, որ կարծես թէ ձգտում է հետևել Մեծ Բրիտանիայի Նախկին Ներկայացուցչի օրինակին։ Զարմանալի է, որ Անգլիան, որն առանց այն էլ քիչ գործեր չունի, սիստեմատիքաբար այնպէս է վարւում, որ կարծես թէ կամենում է յարուցանել սիւննի մահմեդականների հոգևոր պետի դժգոհութիւնը։ Այս բոլոր սխալմունքները Ոսփորի ափին անգլիական դիւանագիտութիւնը դժուար թէ կարողանայ շուտով ուղղել»։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՓՐԵՐ, 1 դեկտեմբերի. — Գեներալ Բերսոնի անգլիական զօրաբաժինը մի քանի թնդանօթներով առաջ շարժուեց և զօրեղ դիրք գրաւեց Կօլենզոյից երեք մղոն հեռու, առանց որևէ ընդդիմութեան հանդիպելու։

ՊՐԵՏՈՐԻԱ. — Պաշտօնական զեկուցումներից երևում է, որ երեկ կէսօրին կռիւ է սկսուել Մոդեր գետի վրայ։ Կռիւն սկսուել է զօրեղ ռմբակոծութեամբ և տևել է մինչև երեկոյեան ժամը 9$^{1}/_{2}$-ը։ Այսօր կռիւը նորոգուել է։ Բրիտանական զօրքերը կռիւն սկսել են զօրեղ ռմբակոծութեամբ, որին բուրները պատասխանում էին։ Հեռագիրն ուղարկելիս կռիւը դեռ շարունակւում էր։ Բուրները պահպանել են իրենց դիրքերը և գերի են բռնել 41 անգլիացի։ Մոդեր գետից, դեկտ. 11-ին խըփուած մի ուրիշ հեռագիր հաղորդում է, որ ռմբակոծութիւնը թուլանում է։ Կռիւը շարունակւում է։

Կիմբերլէյում անդորրութիւն է տիրում։

ԼՈՆԴՈՆ.—Երեկոյի լրագրների մէջ տպուած է Մոդեր գետի մօտ գտնուած բանակից երեքշաբթի առաւօտեան խփուած հետևեալ հեռագիրը. «Շաբաթ գիշերը Մեթուէնը ամբաձիգներին հրամայեց առաջ շարժուելու Մոլերաֆոնտեյնից դէպի հիւսիս խիստ ամրացած բուրների դէմ։ Կիրակի առաւօտեան անգլիական թնդանօթներն սկսեցին ռմբակոծել բուրների դիրքերը։ Ռմբակոծութիւնը տևեց ամբողջ օրը։ Թւում էր, թէ թշնամու թնդանօթներն ստիպուած էին լռել։ Երկուշաբթի օրը ռմբակոծութիւնը նորոգուեց, որից յետոյ անգլիացիները յարձակում գործեցին թշնամու դիրքի վրայ։ Չնայելով անգլիացիների զօրեղ ռմբակոծութեանը, բուրները պահպանեցին իրենց դիրքերը։ Անգլիական հետևակ զօրքը հանդիպեց սպանիչ հրացանաձգութեան։ Անգլիացիների կորուստները մեծ են։

ԼՈՆԴՈՆ, 2 դեկտեմբերի.—Զինուորական մինիստրութիւնը հրամայել է դաշտային թնդանօթաձիգների երեք նոր գունդ կազմակերպել։

- Մոդեր գետից դէպի հիւսիս կըռնուած բրիտանական բանակից երկուշաբթի երեկոյեան հաղորդում են, որ շոտլանդական զօրաբաժինը չորս-չորս հոգուց բաղկացած շարքերով 20 մետր մօտեցաւ բուրների դիրքին, առանց կասկածելու, որ թշնամին այդքան մօտիկ է գտնւում։ Բուրներն սկսեցին կրակել երկու կողմից և հայլենդերներին այնպիսի կորուստներ պատճառեցին, որ վերջիններս յետ փախան, բայց նորից հաւաքուեցին ձորում և այնտեղ քաջութեամբ դիմադրում էին։ Գորդոնեան գնդի հետ միանալով նրանք նորից վճռապէս առաջ գնացին, պաշտպանուած ծովային թնդանօթներով, որոնք ջարդեցին բուրների շանցերը և նրանց թնդանօթներին ստիպեցին լռել։ Բուրները փորձեցին անցնել անգլիացիների բանակն ազատ դաշտի միջով, բայց գուարդիան և ռմբաձիգ գունդը թոյլ չտուին։ Երեկոյեան բուրները նորից սկսեցին ռմբակոծութիւնը, բայց ոչ մի վնաս չտուին։ Մեր զօրքերը կանգնած են իրենց դիրքերում։ Սպասւում է, որ վաղը կռիւը կնորոգուի։ Երկու կողմերի կորուստներն էլ ծանր են։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս հաղորդւում է, որ գեներալ Ուօչոպն (?) սպանուած է Մոդեր գետի մօտ երկուշաբթի օրը պատահած կռուի մէջ։ 293 վիրաւոր, որոնցից 27 հոգի սպայ է, Մոդեր գետից տարուած են Օրանժ-Ռիւեր։ Գատակրը Բուշմանչոկից նահանջ է տալիս դէպի Ստեկրստրոմ։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս հաղորդւում է. «Ուայտը Լէդի-Սմիթից, դեկտ. 12-ից, զեկուցանում է, որ 32 հոգի հիւանդացել են տիֆով և 3 հոգի դիսենտերիայով։ Հիւանդները գտնւում են տեղական հիւանդանոցում։

ԼՈՆԴՈՆ.—Գեներալ Մեթուէնը դեկտեմբերի 12-ից հեռագրում է. «Կիրակի երեկոյեան ժամը 4-ին մինչև մութն ընկնելը մեր թնդանօթները ռմբակոծում էին թշնամու զօրքը, որը զօրեղ դիրք ունէր բարձր լերան վրայ։ Երկուշաբթի լուսադէմին հայլենդերների զօրաբաժինը յարձակում գործեց թշնամու վրայ նրա դիրքի հարաւային ծայրում, բայց յարձակումը չաջողուեց։ Այն ժամանակ վրայ հասաւ գուարդիական զօրաբաժինը, որը հրաման էր ստացել պաշտպանել մեր աջ թևը։ Դրանից յետոյ հայլենդերները յարձակում գործեցին. ձախ թևից նրանց պաշտպանում էին հեծեալներն ու ռմբաձիգները, իսկ գուարդիան ուղղուած էր թշնամու աջ թևի և կենտրոնի դէմ։ Երկուշաբթի ժամը 1$^{1}/_{2}$-ին հայլենդերներին օգնելու համար ուղարկուեց գորդոնեան գունդը։ Բրիտանական զօրքերն իրենց դիրքերը թշնամու առաջ պաշտպանում էին մինչև երեկոյ։ Մեր զօրքերի դիրքը տարածուած էր վեց մղոն դէպի Մոդեր գետը»։ Ի վերջոյ Մեթուէնը զեկուցագրում է. «Ես պահպանում եմ իմ դիրքը, և հողի պատնէշներ են շինում։ Իմ առաջ կանգնած է առնուազն 12,000 բուր։ Մեր կորուստները շատ են»։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)

Հեռախօս № 130

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի: Չունևորները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունքն ընդունուողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանողները---1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար: Երկունքից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւն ըստ համաձայնութեան ժամանակ ձրի: Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ,
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԲԺԻՇԿ Գ. Ս. ՀԵՐՑՖԵԼԴ
Թիֆլիս, Մադաթովսկայա, 5

մասնագէտ կաշու, վեներական, սիֆիլիսական և միզային գործարանների հիւանդութիւնների (ելեքտրականութեամբ), վերադարձաւ դէպի արտասահման կատարած գիտնական ուղևորութիւնից և վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնն ամեն օր առ. ժ. 9-11 և եր. ժ. 5-8

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Հինգ տեղ ունեցող կարեթներ առաջին - առ. 7 ժ. գիշերում է Մլէթում, Թիֆլիս հասնում է հետևեալ օր եր. 6 ժ. 30 ր., երկրորդը - առ. 9 ժ. գիշերում է Դուշեթում, հասնում Թիֆլիս հետևեալ օրը եր. 7 ժ. 55 ր.

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց գիշերելու. առաջին առ. 11 ժ. Թիֆլիս հասնում է հետևեալ օրը ցեր 1 ժ. 20 ր., երկրորդը —եր. 8 ժ., հասնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 10 ժ 15 ր.:

Լինէյկա, առանց գիշերելու,— ցեր. 1 ժ., հասնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 6 ժ. 10 ր.:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է ցեր. 4 ժ. 15 ր., հասնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր.: Թիֆլիսից Բաթում մեկնում է առ, 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 32 ր.:

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է եր. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է եր. 7 ժ. 37 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 12 ր.:

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է եր. 8 ժ. 53 ր, Թիֆլիսից Բագու մեկնում է եր. 9 ժ. 23 ր., Բագու հասնում է ցեր. 11 ժ. 40 ր.:

Պոստային № 4 գնացքը Բաթումի Թիֆլիս մեկնում է եր. 9 ժ. 05 ր. Թիֆլիս հասնում է առ. 9 ժ. 45 ր Թիֆլիսից Բագու մեկնում է առ. 11 ժ 25 ր., Բագու հասնում է առ. 6 ժ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Открыта подписка на 1900 годъ
НА ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТР. ЖУРНАЛЪ
ВОКРУГЪ СВѢТА
16-й годъ изданія
50 еженедѣльн. иллюстрированныхъ №№ въ годъ, болѣе 2000 столбцовъ текста и до 400 рисунковъ.
Между прочимъ, въ текстѣ новый романъ Вас. Ив. Немировича-Данченко «Сторожевые огни».
безплатно 12 томовъ въ полныхъ переводахъ:
1) Даніэля Дефоэ
„РОБИНЗОНЪ КРУЗО".
2) Александра Дюма
„ТРИ МУШКЕТЕРА".
3) Собраніе романовъ въ 6-ти томахъ
ГУСТАВА ЭМАРА.
2 роскошныя преміи:
„Наполеонъ въ плѣну у казаковъ" съ картины Мазуровскаго.
и „Въ Аббасъ-Туманѣ" съ картины А. А. Киселева.
Подписная цѣна на годъ:
безъ картинъ 4 р.
съ двумя картин. 5 р.
съ доставкой и пересылкой.
Адресъ редакціи ВОКРУГЪ СВѢТА: Москва, Ильинскія ворота, д. Титова.
№ 162391 4—4

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
КАКАО СIУ
ФАБР.
С. СIУ и Ко
МОСКВА.

(M.) 35889 52—12

Նոր. գործ. մին. բժշկ. խորհ. թոյլատրել է
ԿԱՏԵԽՈ-ԿՐԵՕԼԻՆԻ ՕՃԱՌԸ
Քիմիայի մագիստրոս Ե. Ի. ԳՈԳՉԵԻԻՁԻ
ԲԺՇԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ կաշու հիւանդութիւնները և
ՏՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԾ. ՀԱՄԱՐ
Օճառների մանրամասն նկարագիրը, որի մէջ ցոյց են տրուած գները և գործածութեան եղանակը, պահանջողին ուղարկում է ՁՐԻԱԲԱՐ լաբորատորիան--С.-Петербургъ, Б. Морская 13 Պահեստները գտնւում են լաբորատորիայի կից և Տեր. Ապր. Աւետր. Ռուս. Ընկ. մէջ Պետերբուրգում և Խարկովում։ Վաճառւում է բոլոր դեղատներում և դեղերի խանութներում։
М. 52---9

Лучшія средства для зубовъ:
ТИМОЛОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ,
ТИМОЛОВЫЙ ЗУБНОЙ ПОРОШОКЪ,
НО ТОЛЬКО
С.-Петербургской
ТЕХНО-химичес. лабораторіи
Остерегаться подражаній
Главный Складъ:
С.-Петербургъ, Коломенская, д. № 12.
продается вездѣ
М. № 59421 9—4

ОДОЛЬ
лучшее для зубовъ

3—1
(М) № 170735

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ծանուցանում է ի գիտութիւն պ. պ. մասնակիցների, որ ընկերութիւնն սկսել է իւր գործողութիւնը ներկայ դեկտեմբերի 1-ից պայմանագրի 4-րդ յօդուածի հիման վրայ։

Վարչութիւնը նշանակել է երկրորդ վճարման համար 5%, որ իւրաքանչիւր փային 12 ր. 50 կ. է անում։ Վճարման ժամանակամիջոց է նշանակուած ներկայ դեկտ. 16-ից մինչև 22-ը ընկերութեան գրասենեակում, որ գտնւում է Պուշկինի պասաժում։ [177] 3—1

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
առաջարկում են
„ՊԵՏՐՈԼ" (ՀԵՂՈՒԿ)
ՄԱԶԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ:
(ՍԱՊՈՆ) „ՊԵՏՐՈԼ"
ՄԱԶԵՐԻ ԹԵՓԸ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:
(M.) № 87600 9 5

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ Ատենում դեկտեմբերի 8-ին նշանակուած է ԱՃՈՒՐԴ Թէլէթ ուխտատեղու մի կտորը հանդերձ սենեակով և ախոռով աճուրդի տալու, որոնք գտնւում են նոյն ուխտատեղու գաւթում։ Ցանկացողները կարող են գնալ կոնսիստորիայի գրասենեակը պայմանների հետ ծանօթանալու։
Անդամ կոնսիստորիայի՝ Զաքարիա քահ. Զարգեղեան
(174) 3—2

УЧИТЕЛЬ ТАНЦЕВЪ
Л. П. Оверлло.
Обучаетъ кромѣ всѣхъ новыхъ и прежнихъ танцевъ еще вновь полученному танцу Русская Кадрилька „Желанная" По средамъ специальные уроки мазурки. Судебная ул. д. Лугинова № 31 противъ окр. суд. Объ условіяхъ отъ 11 до 2 и отъ 5 до 8 вечера.

ВЪ ГОДЪ 8 РУБЛЕЙ.
Открыта подписка на 1900 годъ.
ЧЕРНОМОРСКІЙ ВѢСТНИКЪ
Ежедневная газета Черноморскаго побережья и Западнаго Кавказа. съ еженедѣльными иллюстрированными приложеніями.
Издается въ г. Батумѣ съ 1895 года
На годъ, съ пересылкой—восемь рублей, на полгода—пять рублей Адресъ: Батумъ, «Черноморскій Вѣстникъ».
(Ф.) 3—1

Дозв. цензурою. Тифлисъ, Декаб. 3-го дня, 1899 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ